ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-20/2 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

Ք. Երևան

«9» «դեկտեմբերի » 2019թ.
Ժամը 12:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի հատուկ համակարգերի բաժնի պետ, (հանձնաժողովի նախագահ)՝ Լիլիթ Ավագյան

Հանձնաժողովի անդամ՝
Վարչապետի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի հատուկ համակարգերի բաժնի գլխավոր ճարտարագետ՝ Արմենակ Այվազյան

Վարչապետի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի հատուկ համակարգերի բաժնի գլխավոր ճարտարագետ՝ Ռուբեն Հովհաննիսյան

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ՝ Վանուշ Իսկանդարյան

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ավագ մասնագետ՝ Սվետլանա Կարապողոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՎԱ ԳԿ գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Դավիթ Գրիգորյան

1. « ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-20/2» ծածկագրով մրցույթի հայտերի ներկայացման և գնահատման մասին

1.1 Հայտերը բացվել են 2019 թվականի դեկտեմբերի 9-ին էլեկտրոնային եղանակով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները:

N	Մասնակիցների անվանումները	Էլեկտրոնային փոստի հասցե
1	«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ	corp_tender@beeline.am
2	«Յուքոմ» ՍՊԸ	corporate@ucom.am
3	«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ	info@mts.am

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությանբ «Յուքոմ» ՍՊԸ-ի:

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությանբ «Յուքոմ» ՍՊԸ-ի, որը չի ներկայացրել գնային առաջարկ:

2.3 Հանձնաժողովը որոշեց՝

«Յուքոմ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հարցադրում N 1՝

1. Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում ծառայությունները մատուցման սկիզբը կողմերի նախատեսվելու է 01.01.2020թ. -ից?

Պարզաբանում N 1՝

Հարգելի գործընկեր,

Ծառայությունների մատուցման սկիզբը համարվում է 2020 թվականի հունվարի 1-ը, սակայն անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով հնարավոր է որոշ հասցեների միացում մինչև 2019 թվականի դեկտեմբերի 30-ը:

Հարցադրում N 2՝

Հիմնական հանգույցից (ՀՀ վարչապետի աշխատակազմ, կառավարական տուն 1) դեպի ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 գործող օպտիկամանրաթելային կապուղու (dark fiber) սպասարկում, այն է՝ գետնանցումով անցնող մալուխների սպասարկում և վարձակալության պայմանների ապահովում:

2. Տեխնիկական բնութագրի պարզաբանում

ՀՀ վարչապետի աշխատակազմ, կառավարական տուն 1-ից դեպի ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 գործող օպտիկամանրաթելային կապուղին հանդիսանում է ՀՀ Վարչապետի աշխատակազմի սեփական մալուխը, թե հանդիսանում է այլ ընկերության սեփականություն

Պարզաբանում N 2՝

Հանդիսանում է ՀՀ վարչապետի աշխատակազմի սեփականություն:

Հարցադրում N 3՝

Նաև եթե նշված մալուխը հանդիսանում է ՀՀ Վարչապետի աշխատակազմի սեփական մալուխը, ապա կատարողը գետնանցումով անցնող գործող մալուխների վարձակալության պայմանները ապահովելու համար, որ ընկերությանն է կատարելու սույն մալուխի վարձակալության վճարները:

Պարզաբանում N 3՝

Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունը:

Հարցադրում N 4՝

Կառուցել ստորգետնյա ֆիզիկապես առանձնացված օպտիկամանրաթելային մալուխ («dark fiber», բախկացած առնվազն 8 թելից) հիմնական հանգույցից դեպի Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 համապատասխան սարքավորումներով (տես աղյուսակ 2)՝ յուրաքանչյուր կետում միացնելով 2 թել

3. Տեխնիկական բնութագրի պարզաբանում

Հիմնական հանգույցից - ՀՀ կառավարական տուն 1, դեպի Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 միջև կառուցելիք ստորգետնյա օպտիկամանրաթելային մալուխի համար ՀՀ Վարչապետի աշխատազմը արդյոք ունի սեփական ստորգետնյա գետնանցում նշված հասցեների միջև:

Պարզաբանում N 4՝

Ոչ:

Հարցադրում N 5՝

Նաև, եթե ՀՀ Վարչապետի աշխատազմը չունի սեփական ստորգետնյա գետնանցում նշված հասցեների միջև, կատարողը ՀՀ Վարչապետի աշխատազմին օպտիկամանրաթելային մալուխը սեփեականության իրավունքով հանձնելուց հետո մալուխների վարձակալության պայմանները նույնպես պեք է ապահովի ?

Պարզաբանում N 5՝

Այո

Հարցադրում N 6՝

Կառուցել ստորգետնյա ֆիզիկապես առանձնացված օպտիկամանրաթելային մալուխ («dark fiber», բախկացած առնվազն 4 թելից) ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 և ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող., 5 շենքի միջև՝ համապատասխան սարքավորումներով (տես աղյուսակ 2)՝ յուրաքանչյուր կետում միացնելով 2 թել: Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 սերվերային հանգույցներում անցկացնել օպտիկամանրաթելային մալուխներ (բախկացած առնվազն 4 թելից) համապատասխան սարքավորումներով (տես աղյուսակ 2) և հանձնել ՀՀ վարչապետի աշխատակազմին որպես սեփականություն: Սարքավորումները պետք է լինեն առնվազն 2018 թվականի արտադրության և 1 տարի երաշխիքով:

4. Տեխնիկական բնութագրի պարզաբանում

ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 և ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող., 5 շենքի միջև կառուցելիք ստորգետնյա օպտիկամանրաթելային մալուխի համար ՀՀ Վարչապետի աշխատազմը արդյոք ունի սեփական ստորգետնյա գետնանցում նշված հասցեների միջև:

Պարզաբանում N 6՝

ՈՉ

Հարցադրում N 7՝

Նաև, եթե ՀՀ Վարչապետի աշխատազմը չունի սեփական ստորգետնյա գետնանցում նշված հասցեների միջև, կատարողը ՀՀ Վարչապետի աշխատազմին օպտիկամանրաթելային մալուխը սեփեականության իրավունքով հանձնելուց հետո մալուխների վարձակալության պայմանները նույնպես պեք է ապահովի ?

Պարզաբանում N 7՝

ԱՅՈ

Հարցադրում N 8՝

Տեխնիկական բնութագրի պարզաբանում

Շարժական ինտերնետ, Wi-Fi միացում (STA կառավարում) , մինչև 32 սարք միացնելու հնարավորություն (802.11b/g/n), LTE FDD՝ DL 150 Մբ/վ, UL 50 Մբ/վ /15 հատ

Խնդրում ենք պարզաբանել

Ինչպիսի STA կառավարում պետք է ապահովի մատակարարը

Պարզաբանում N 8՝

Անհրաժեշտության դեպքում պատվիրատուն կարող է պահանջել տեխնիկական աջակցություն

Հարցադրում N 9՝

Շարժական կապի ՍԻՄ քարտերի տրամադրումից բացի ինչ wi-fi սարքավորում է անհրաժեշտ

Պարզաբանում N 9՝

Անհրաժեշտության դեպքում պատվիրատուն կարող է պահանջել կամ wi-fi սարքավորում, կամ 4G mobile router.

Հարցադրում N 10՝

Որքան է նշված Շարժական ինտերնետի յուրաքանչյուրի համար նախատեսվող Ինտերնետ ծավալը ԳԲ-երով:

Պարզաբանում N 10՝

Անսահմանափակ 10Mb/s թողունակությամբ արագություն դեպի ՀՀ կառավարության կորպորատիվ ցանց

Հարցադրում N 11՝

Արդյոք 7. 15 կետը ենթադրում է, որ Կատարողը ծառայությունների մատուցումը պետք է սկսի միայն և միայն տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսելու պահից և ինչ կարգով պետք է Կատարողը տեղեկացվի նման միջոցների նախատեսման մասին:

Պարզաբանում N 11՝

Հարգելի գործընկեր,

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո սահմանված կարգով ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը կուղարկվի պայմանագիր կնքած անձին:

Հարցադրում N 12՝

Եթե մինչ նման միջոցների նախատեսումը կնքված պայմանագրի շրջանակում արդեն իսկ մատուցվել են ծառայություններ, ինչ կարգով պետք է Պատվիրատուն կատարի վճարումներ:

Պարզաբանում N 12՝

Կնքված պայմանագրի շրջանակներում ծառայությունները մատուցվու են կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո:

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

4.1 Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են.

N	Անվանում	«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ		«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ	
		Գումարն առանց ԱԱՀ	Ընդհ. գին	Գումարն առանց ԱԱՀ	Ընդհ. գին
1	Տարածքային ցանցի հետ կապված ծառայություններ	328 223 500	393 868 200	274 790 000	329 748 000

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

5. « ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-20/2» ծածկագրով մրցույթի նիստի արդյունքների ամփոփման մասին

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մասնակցին հրավիրել միաժամանակյա բանակցությունների գների նվազեցման շուրջ, որը տեղի կունենա սույն թվականի դեկտեմբերի 12-ին, ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 1, 18 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների և քարտուղարի ստորագրությունը

Նախագահ՝	Լիլիթ Ավագյան	ԳՊ/ԳԱՊ	
Անդամներ՝	Արմենակ Այվազյան	ԳՊ/ԳԱ	
	Ռուբեն Հովհաննիսյան	ԳՊ/ԳԱ	
	Վանուշ Իսկանդարյան	ԳՊ/ԲԱ	
	Սվետլանա Կարապողոսյան	ԳՊ/ԲԱ	
Քարտուղար՝	Դավիթ Գրիգորյան	ԳՊ/ՄՀմ	